Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-137-17.01.2022 ՏՀ 011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքաշինության մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին պարբերության «ը» կետը՝ «քաղաքաշինական փաստաթղթերը» բառերից հետո, լրացնել «, այդ թվում՝ քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կիրարկման մեջ դրված՝ Կառավարության կողմից սահմանված կարգի պահանջներին համապատասխան մշակված բազմակի օգտագործման օրինակելի (ճարտարապետաշինարարական) նախագծերը (բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ պարբերության «ե.1» ենթակետով նախատեսված դեպքերի)։»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը լրացնել նոր՝ «ե» ենթակետով, հետևյալ բովանդակությամբ՝ «ե) կիրառել բնակելի, հասարակական, արտադրական նշանակության օբյեկտների բազմակի օգտագործման օրինակելի նախագծեր, որոնք հիմք են հանդիսանում շինարարական ծրագրերի մեկնարկի և դրանց ֆինանսավորման (անկախ ֆինանսավորման աղբյուրից) համար, եթե այդպիսի պայման նախատեսված է շինարարական աշխատանքների կապալի և խորհրդատվական ծառայությունների պայմանագրերով:

Ընդ որում՝ պետական բյուջեի միջոցների հաշվին բազմակի օգտագործման օրինակելի նախագծերով իրականացվող շինարարական ծրագրերի (աշխատանքների, խորհրդատվական ծառայությունների) ֆինանսական հատկացումների չափը՝ մինչև նախագծերի տեղակապման (տեղայնացման) (օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված ժամկետում) ավարտը, ենթակա է հաշվարկման քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի կողմից հաստատված գնագոյացման համակարգի նորմատիվ փաստաթղթերով սահմանված կարգերին ու խոշորացված ցուցանիշներին համապատասխան:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը լրացնել նոր՝ «ե.1» ենթակետով, հետևյալ բովանդակությամբ՝ «ե.1) ոչ պետական բյուջեի միջոցների հաշվին պատվիրված՝ կապալի պայմանագրերով նախատեսված դեպքերում, բազմակի օգտագործման նախագծերի տնօրինումը, տիրապետումը, հետագա կիրառումն (օգտագործումն) այլ ծրագրերի շրջանակներում նույն կառուցապատողի (պատվիրատուի) կողմից կարող է իրականացվել սեփական հայեցողությամբ, միայն տեղակապման նախագծեր մշակելու միջոցով՝ առանց սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության «ը» կետով նախատեսված՝ քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի ղեկավարի հրամանով դրանց հաստատումն ու կիրարկումն ապահովելը: Ընդ որում, կառուցապատողն (պատվիրատուն) իրավունք ունի իր հայեցողությամբ որոշված անձանց, իր հայեցողությամբ որոշված պայմաններով տրամադրել բազմակի օգտագործման օրինակելի նախագծերը՝ տեղակապելու համար»:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ պարբերության «ա» ենթակետը «ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն հոդվածի 3-րդ պարբերության «ե» և «ե.1» ենթակետերով նախատեսված դեպքերի)» բառերով:

Հոդված 5. Օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ կետը լրացնել նոր «գ» և «դ» ենթակետերով, հետևյալ բովանդակությամբ՝ «գ) սահմանված կարգով հաստատված, փորձագիտական դրական եզրակացություն ստացած բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների կառուցման, տարածքների կառուցապատման և բարեկարգման բազմակի օգտագործման օրինակելի նախագծերը.», «դ) բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի (0 նիշից ցածր ստորգետնյա հատվածի) տեղակապման նախագծային փաստաթղթերը ենթակա են հաստատման օրենդրությամբ սահմանված կարգով»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

~~Առաջին ընթերցում~~

ՆԱԽԱԳԻԾ

~~Կ-137-17.01.2022-ՏՀ-011/1~~

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

~~ՕՐԵՆՔԸ~~

ՕՐԵՆՔ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքաշինության մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին ~~մասի~~ պարբերության «ը» կետը՝ «քաղաքաշինական փաստաթղթերը» բառերից հետո, լրացնել «, այդ թվում՝ քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կիրարկման մեջ դրված՝ Կառավարության կողմից սահմանված կարգի պահանջներին համապատասխան մշակված բազմակի օգտագործման օրինակելի (ճարտարապետաշինարարական) նախագծերը~~:»:~~ (բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ պարբերության «ե.1» ենթակետով նախատեսված դեպքերի):»:a

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը լրացնել նոր՝ «ե» ենթակետով, ~~հետեւյալ~~ հետևյալ բովանդակությամբ՝ «ե) կիրառել բնակելի, հասարակական, արտադրական նշանակության օբյեկտների բազմակի օգտագործման օրինակելի նախագծեր, որոնք հիմք են հանդիսանում շինարարական ծրագրերի մեկնարկի ~~եւ~~ և դրանց ֆինանսավորման (անկախ ֆինանսավորման աղբյուրից) համար, եթե այդպիսի պայման նախատեսված է շինարարական աշխատանքների ~~եւ~~ կապալի և խորհրդատվական ծառայությունների ~~կապալի~~ պայմանագրերով:

Ընդ որում՝ պետական բյուջեի միջոցների հաշվին բազմակի օգտագործման օրինակելի նախագծերով իրականացվող շինարարական ծրագրերի (աշխատանքների, խորհրդատվական ծառայությունների) ֆինանսական հատկացումների չափը՝ ~~մինչեւ~~ մինչև նախագծերի տեղակապման (տեղայնացման) (օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված ժամկետում) ավարտը, ենթակա է հաշվարկման քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի կողմից հաստատված գնագոյացման համակարգի նորմատիվ փաստաթղթերով սահմանված կարգերին ու խոշորացված ցուցանիշներին համապատասխան~~:»~~:

~~*Հոդված 3.*~~ Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը լրացնել նոր՝ «ե.1» ենթակետով, հետևյալ բովանդակությամբ՝ «ե.1) ոչ պետական բյուջեի միջոցների հաշվին պատվիրված՝ կապալի պայմանագրերով նախատեսված դեպքերում, բազմակի օգտագործման նախագծերի տնօրինումը, տիրապետումը, հետագա կիրառումն (օգտագործումն) այլ ծրագրերի շրջանակներում նույն կառուցապատողի (պատվիրատուի) կողմից կարող է իրականացվել սեփական հայեցողությամբ, միայն տեղակապման նախագծեր մշակելու միջոցով՝ առանց սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության «ր» կետով նախատեսված՝ քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի ղեկավարի հրամանով դրանց հաստատումն ու կիրարկումն ապահովելը: Ընդ որում, կառուցապատողն (պատվիրատուն) իրավունք ունի իր հայեցողությամբ որոշված անձանց, իր հայեցողությամբ որոշված պայմաններով տրամադրել բազմակի օգտագործման օրինակելի նախագծերը՝ տեղակապելու համար»:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ պարբերության «ա» ենթակետը «ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն հոդվածի 3-րդ պարբերության «ե» ~~ենթակետով~~ և «ե.1» ենթակետերով նախատեսված դեպքերի)» բառերով:

Հոդված ~~4~~5.. Օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ կետը լրացնել նոր «գ» և «դ» ենթակետերով, հետևյալ բովանդակությամբ՝ «գ) սահմանված կարգով հաստատված, փորձագիտական դրական եզրակացություն ստացած բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների կառուցման, տարածքների կառուցապատման և բարեկարգման բազմակի օգտագործման օրինակելի նախագծերը.», «դ) բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի (0 նիշից ցածր ստորգետնյա հատվածի) տեղակապման նախագծային փաստաթղթերը ենթակա են հաստատման օրենքով սահմանված կարգով»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ « ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-137 17.01.2022 ՏՀ 011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «մասի» բառն առաջարկում ենք փոխարինել «պարբերության» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի:»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք նախատեսել բացառություն Նախագծի 3-րդ հոդվածի նոր «ե.1» ենթակետով նախատեսվող դեպքերի համար, հետևյալ բովանդակությամբ. «բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ պարբերության «ե.1» ենթակետով նախատեսված դեպքերի:»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է

3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող «ե» ենթակետում կիրառվում է «խորհրդատվական ծառայությունների կապալի պայմանագիր» տերմինը: Այս առումով նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով՝ կապալի և ծառայությունների մատուցման պայմանագրերը ամրագրված են որպես պայմանագրերի առանձին տեսակներ՝ Նախագծի 2-րդ հոդվածում նշված ձևակերպումն առաջարկում ենք խմբագրել, մասնավորապես՝ «շինարարական աշխատանքների եւ խորհրդատվական ծառայությունների կապալի պայմանագրերով» ձևակերպումը առաջարկում ենք փոխարինել «շինարարական աշխատանքների կապալի և խորհրդատվական ծառայությունների պայմանագրերով» ձևակերպմամբ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկում ենք օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը լրացնել նոր՝ «ե.1)» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «ե.1) ոչ պետական բյուջեի միջոցների հաշվին պատվիրված՝ կապալի պայմանագրերով նախատեսված դեպքերում, բազմակի օգտագործման նախագծերի տնօրինումը, տիրապետումը, հետագա կիրառումն (օգտագործումն) այլ ծրագրերի շրջանակներում նույն կառուցապատողի (պատվիրատուի) կողմից կարող է իրականացվել սեփական հայեցողությամբ, միայն տեղակապման նախագծեր մշակելու միջոցով՝ առանց սույն	Ընդունվել է Նախագծում կատարվել է համապատասխան լրացում, ավելացվել է նոր «ե.1)» ենթակետ: Լրացումը կատարվել է, հաշվի առնելով մասնավոր Կառուցապատողների պատվիրատվությամբ սեփական միջոցների հաշվին մշակվող բազմակի օգտագործման նախագծերի մատչելի կիրառելիության	Ընդունվել է

			օրենքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության «ը» կետով նախատեսված՝ քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի ղեկավարի հրամանով դրանց հաստատումն ու կիրարկումն ապահովելը: Ընդ որում, կառուցապատողն (պատվիրատուն) իրավունք ունի իր հայեցողությամբ որոշված անձանց, իր հայեցողությամբ որոշված պայմաններով տրամադրել բազմակի օգտագործման օրինակելի նախագծերը՝ տեղակապելու համար»: »	անհրաժեշտությունը՝ բացառելով դրանց ընդգրկումը պետական կառավարման մարմնի ղեկավարի հրամանով հաստատվող Ցանկում: Ներկայացված կարգավորումը թույլ է տալիս մասնավոր Կառուցապատողի հայեցողությամբ և ընդունված որոշումների համաձայն տնօրինել և տիրապետել ոչ պետական միջոցների հաշվին մշակված բազմակի օգտագործման նախագծերը:	
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածում ««ե» ենթակետով» բառերը առաջարկում ենք փոխարինել ««ե» և «ե.1» ենթակետերով» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 1-ին հոդվածով «Քաղաքաշինության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին պարբերության «ը» կետում ներկայացված կարգավորմանն առնչվող համապատասխան դրույթ առաջարկվում է նախատեսել նաև Օրենքի «Քաղաքաշինական փաստաթղթեր» 17-րդ հոդվածի 14-րդ մասում: Մասնավորապես՝ Օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ կետը առաջարկում ենք լրացնել նոր «գ» և «դ» ենթակետերով, հետևյալ բովանդակությամբ՝ «գ) սահմանված կարգով հաստատված, փորձագիտական դրական եզրակացություն ստացած բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների կառուցման, տարածքների կառուցապատման և բարեկարգման բազմակի օգտագործման օրինակելի նախագծերը.», «դ) բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի (0 նիշից ցածր ստորգետնյա հատվածի) տեղակապման նախագծային փաստաթղթերը ենթակա են հաստատման օրենդրությամբ սահմանված կարգով»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն; Լրացումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշման 97-րդ կետով, համաձայն որի՝ «97. Բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կամ սերտիֆիկացված նախագծերի տեղակապման (զրոյական նիշից ցածր) նախագծային փաստաթղթերը մշակվում են տեղակապվող օբյեկտի ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) համար սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:»:	Ընդունվել է